



# ՎԱԶԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի  
9 լսարանի ուսանող)

## Մ Ե Ր Վ Ա Ն Ք Ե Ր Ը

Ո՛ւր էլ որ լինես ամբողջ աշխարհում,  
Ո՛ւր որ ապրել է մի ցեղ մարդկային,  
Թե որ չգտնես այնտեղ հայ մարդուն,  
Մի վանք կգտնես՝ հայ գիրը ճակատին:

Աստղերի նման հայերն են ցրվել,  
Ցրվել, շաղ եկել չորս կողմն աշխարհի,  
Ու ոմանք լացով ուրիշի ձուլվել՝  
Իրենց վանքերն են թողել աղոթքի:

Ու բարձունքներում գյուղ ու քաղաքի,  
Հայոց աշխարհի ամեն մի հովտում,  
Կոթողներ ունենք հանճարեղ մտքի,  
Որ դեռ լալիս են ու դեռ աղոթում:

Կարծես անթառամ ծաղիկներ լինեն,  
Լեռների վրա, վիհների եզրին,  
Որոնց գմբեթներն՝ ավերակ քե շեն՝  
Բույն են հալածված աղավնիներին:

Մարդկային ձեռքի հետքեր չեն կարծես,  
Ծնունդ են ձեռքի մի աստվածային,  
Նրանք գիտությամբ քերդեր են պես-պես՝  
Վահան են եղել իմ ժողովրդին:

Փրկության, հույսի ու լույսի բերդեր,  
Մեր մշակույթի հնոցներն անշեջ,  
Նրանք են տվել միացում ու սեր,  
Եվ անմահ ոգին ներշնչել մեր մեջ:

Նրանք են մեր սուրբ լեզուն մայրենի,  
Նրանց զանգերի ղողանջն՝ ահագանգ՝  
Որ շնոհանանք մեր հողն հայրենի՝  
Սրբություն սրբոցն՝ համայն լուսնի տակ:

Ինչքան էլ լինենք իրարից հեռու,  
Ու ցրված մեանք աշխարհում նսեմ,  
Դարձյալ անմահ է կապը հայ Ոգու՝  
Հայրենի սերն ու հավատը վսեմ:

Ու ամեն մի վանք՝ մի ըմբոստ ոգի,  
Մի Մասիս սար է ամեն մի գմբեթ,  
Մի վառ կանթեղ է հույս ու տենչանքի  
Ամեն մի հայի սրտի մեջ հավետ:

Որպես խոր հավատ, մթնում լույս, փարոս,  
Որպես հայ հոգի՜ իրար շղթայված,  
Կանգուն կմնան գմբեթներն հայոց,  
Մասիսների պես հավերժին զամված:

